

## ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Պաշտոն:** Վերլուծաբան

**Զբաղվածություն:** Ամբողջ աշխատանքային օր

**Տնողություն:** Երկարաժամկետ

**Փոխհատուցում:** Մրցունակ, հիմնված նախորդ փորձի վրա

**Քաղաք:** Երևան

### ԿՏԱԿ-ի մասին

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը (ԿՏԱԿ) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, ստեղծվել է ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 11-ի թիվ 408-Ն որոշմամբ: ԿՏԱԿ-ի գործունեության առարկան Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումն ու դրա շարունակականության ապահովումն է:

ԿՏԱԿ-ի վերլուծական կարողությունների զարգացման և դրանց շարունակականության ապահովման նպատակով իրականացվում է անձնակազմի համալրում: Թափուր հաստիքին նկարագիրը բերված է ստորև:

### Պաշտոնի ընդհանուր նկարագիր

Վերլուծաբանի հիմնական գործառույթն է իրականացնել կրթական ոլորտի ուսումնասիրություններ և / կամ աջակցել դրանց իրականացմանը: Այդ ուսումնասիրությունները կարող են ներառել՝

1. թվային կամ տեքստային տեղեկատվության վրա հիմնած հաշվետվությունների պատրաստում,
2. դաշտային աշխատանքներ՝ մասնավորապես հարցաշարերի և թեստերի իրականացում,
3. տվյալների պարզ բազաների ստեղծում,
4. գործարար նամակագրություն:

Նշված գործառույթներին զուգահեռ ԿՏԱԿ-ի վերլուծաբանը պետք է հետաքրքրված լինի կրթության ոլորտում առկա խնդիրներով և մարտահրավերներով: Մեր թիմի կողմից խոստանում ենք ապահովել, ինտենսիվ ու անընդհատ մասնագիտական աճ:

## Պաշտոնի հիմնական գործառույթների շրջանակ

- Մշակել ու ստեղծել ձևաչափեր վիճակագրական վերլուծության, տվյալների ներմուծման և մաքրման համար:
- Օժանդակել նախագծերի հետ կապված հաշվետվությունների, հոդվածների և շնորհանդեսների մշակմանը:
- Ամբողջացնել հետազոտությունների արդյունքները՝ աղյուսակների, գրաֆիկների, հարցաթերթիկներ և գրավոր կարճ հաշվետվությունների միջոցով:
- Իրականացնել նկարագրական և բազմագործոն վիճակագրական վերլուծություն՝ համակարգչային ծրագրերի միջոցով (ցանկալի է):
- Իրականացնել տվյալների մուտքագրման և այլ նախապատրաստական աշխատանքներ:
- Իրականացնել ուսումնասիրություններ համացանցում:
- Ներկայացնել հետազոտության արդյունքները շահառուների տարբեր խմբերի:
- Իրականացնել տվյալների հավաքագրում ստանդարտացված հարցաշարերի և թեստերի միջոցով:
- Հավաքագրել և կոորդինացնել հետազոտության մասնակիցներին / հետազոտվողներին:
- Կողմնորդել հավաքագրված տվյալները մուտքագրման համար:
- Աջակցել հարցաշարերի մշակման և նախագծման աշխատանքներին:

## Ընդհանուր հմտություններ

**Կարդալ** - կարդալ և հասկանալ կրթական վերլուծական փաստաթղթեր, հոդվածներ, ՀՀ կառավարության որոշումներ:

**Գրել** - արդյունավետ հաղորդակցվել գրավոր ձևաչափով՝ հաշվի առնելով կարդացողների առանձնահատկությունները:

**Սովորել** - նոր տեղեկատվության նշանակության հասկացում ինչպես ներկա, այնպես էլ ապագա խնդիրների լուծման մեջ:

**Լսել** - ուշադրություն դարձնել նրան ինչ ասում են մարդիկ հանդիպումների, քննարկումների և սեմինարի ժամանակ: Ժամանակ տրամադրել հասկանալու համար ասվածը, մտածել ասվածի մասին:

**Հարցնել** - տալ հարցեր այն պահին, երբ դրա անհրաժեշտությունը կա (նկատեք, խոսքը ճիշտ կամ սխալ հարցի մասին չէ, այլ ճիշտ պահին տրվող հարցի). չընդհատել անհամապատասխան պահերին:

**Դատել և տրամաբանել** - տրամաբանական դատողություններ անել այլընտրանքային լուծումների ուժեղ և թույլ կողմերի վերհանման, մոտեցումների և եզրակացությունների մասին:

### **Տեխնոլոգիական հմտություններ**

1. Համակարգչային փաթեթներ - Microsoft Word, Excel, Power Point
2. Հատուկ վերլուծական ծրագրերի իմացություն - IBM SPSS Statistics, Stata

### **Ժամկետ և դիմելու պայմաններ**

Հայտերը ընդունվում են մինչև սույն թվականի հունվարի 20 - ը ներառյալ:

Դիմելու համար անհրաժեշտ է ուղարկել՝

1. *ինքնակենսագրական,*
2. *մինչև 400 բառ մոտիվացիոն նամակ:*

Հայտերն անհրաժեշտ է ուղարկել [careers@ktak.am](mailto:careers@ktak.am) հասցեին՝ թեմայում նշելով «Վերլուծաբան»:

Կապ է հաստատվելու միայն առաջնային ընտրությունը անցած թեկնածուների հետ: